



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երեքշաբթի, 30 Հոկտեմբերի յետմիջօրէին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Համազգայինի երեք ներկայացուցիչներու, որոնք Ազգային Առաջնորդարան եկած էին ներկայացնելու 18 Նոյեմբերին նախատեսուած՝ նոր հրատարակուած գիրքի մը նուիրուած ձեռնարկին մանրամասնութիւնները:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Շրջանային Վարչութեան անդամներէն՝ Տիկին Անիթա Հաւատեան եւ յիշեալ ձեռնարկի յանձնախումբի անդամներէն Տիկնայք Նորա Եագուպեան եւ Լուսին Չուխաճեան: Անոնք յայտնեցին, որ 18 Նոյեմբերին, Հոլիվուտի «Տաղլեան» սրահին մէջ կազմակերպած են ճաշկերոյթ մը, որուն ընթացքին պիտի ներկայացուի Դաւիթ Խերտեանի նոր հրատարակուած *Forgotten Bread* հատորը, նուիրուած՝ ամերիկահայ առաջին սերունդի գրողներուն: Ձեռնարկին հասոյթը պիտի յատկացուի լրագրութեան եւ յարակից ճիւղերու մէջ բարձրագոյն ուսման հետեւող հայ ուսանողներուն: Հիւր համազգայնականները Առաջնորդ Սրբազանը հրաւիրեցին ձեռնարկին ու խնդրեցին անոր օրհնութիւնը:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց այս նախաձեռնութիւնը, որ կը ծառայէ մէկէ աւելի բարի նպատակներու: Ան յաջողութիւն մաղթեց Համազգայինի այս ու նմանօրինակ նախաձեռնութիւններուն:

PRELATE MEETS WITH REPRESENTATIVES OF HAMAZKAYIN

On the afternoon of Tuesday, October 30, representatives of Hamazkayin met with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, to relay details of an upcoming dinner and book signing. The delegation included Regional Executive member Mrs. Anita Havatian, and organizing committee members Mrs. Nora Yacoubian and Lucine Choukajian.

The members had come to invite the Prelate to a book presentation and signing of David Kherdian's newly published book "Forgotten Bread", and to ask for his blessing. The event will take place on Sunday, November 18, at Taglyan Hall in Hollywood. All proceeds will go to scholarship funds for Armenian students in the writing and journalism fields.

The Prelate commended their efforts and wished success to all of Hamazkayin's undertakings.